

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N⁰1

2020թ սեպտեմբերի 3-ին ժամը 12⁰⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N⁰1 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2020-2021 ուստարվա նախապատրաստական և կազմակերպչական հարցերի մասին:

2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Է. Կոկանյանը նշեց, որ բակալավրիատի 1-ին կուրսում ընդունելություն չունենք ներկա պահի դրությամբ, առկա մագիստրոտուրայում ունենք 7 ուսանող, իսկ հեռակա մագիստրատուրայի ընդունելությունը դեռ շարունակվում է:

Ըստ օրակարգի 1-ին հարցը – 2020-2021 ուստարվա նախապատրաստական աշխատանքների և Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների մասին էր: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 1-ին կիսամյակի բակալավրիատի 1- 4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Եվ ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, այս տարի ևս պետք է հաստատվեն տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Հայտարարվեց, որ հաջորդ նիստով նախատեսվում է հաստատել դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, որը նախատեսված է սեպտեմբերի 10-ին:

Է. Կոկանյանը նշեց, որ համավարակով պայմանավորված 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի դասերը, ըստ ԲՈՒՀ-ի որոշման, կազմակերպվելու են հիբրիդային ձևով, այն է մասամբ առցանց, մասամբ առերես եղանակով: Հիմնականում լսարանային առերես ձևով կկազմակերպվեն գործնական և լաբորատոր դասերը: Այնուհանդերձ նախորդ ուսումնական տարում հնարավոր եղավ վիրտուալ լաբորատորիաների միջոցով

կազմակերպել և իրականացնել նաև լաբորատոր դասերը հնարավորության սահմաններում:

Ընթացիկ հարցերից անդրադարձան 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը: Առցանց կկազմակերպվեն նաև պրակտիկաները: Է Կոկանյանը նշեց, որ արդեն նախադեպը կա առցանց պրակտիկաների կազմակերպման և այս տարի ևս այն կկազմակերպվի առցանց:

Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ն. Բաբաջանյանը ներկայացրեց, որ 1-ին կիսամյակում 6 շաբաթ մանկավարժական պրակտիկա ունեն բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները, ովքեր իրենց պրակտիկան անցկացնելու են առցանց և 3 շաբաթ մանկավարժահետազոտական պրակտիկա ունեն մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները, որոնց պրակտիկան կազմակերպվելու և անցկացվելու է ՀՊՄՀ-ում ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Մագիստրոսները կկցվեն իրենց գիտական ղեկավարների դասընթացներին՝ բակալավրիատի կուրսերում և հնարավորության դեպքում կվարեն դասեր: Բացի դա, ըստ ամբիոնում ընդունված ձևաչափի մագիստրոսներին հանձնարարվում է պատրաստել առաձին դասընթացների առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ, դրանց հիման վրա կազմում են թղթապանակներ: Պրակտիկայի ավարտին և բակալավրիատի 4-րդ կուրսում և մագիստրատուրայի 2-րդ կուրսում կազմակերպվում է պրակտիկայի պաշտպանություն, ըստ նախապես սահմանված գրաֆիկի:

Պրակտիկաների համար ևս classroom հարթակում ստեղծվել են առանձին դասընթացներ, որտեղ տեղադրվում են ուսանողների կատարած աշխատանքերը, ընթացիկ հաշվետվությունները և վերջում թղթապանակները:

Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է.Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաներին: Դասախոսներին հանձնարարվեց 2 շաբաթյա ժամկետում ամբիոնի կողմից կազմված ձևաչափով ամբիոն ներկայացնել թեմաները, ըստ բեռնվածքի նշված ուսանողների թվով, հնարավորության դեպքում նաև 1 թեմա ավել:

Ամբիոնի հաջորդ նիստերին նախատեսվում է քննարկել և հաստատել թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Միհիթայան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N⁰2

2020թ սեպտեմբերի 10-ին ժամը 18⁰⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N⁰2 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում,
2. Ընթացիկ հարցեր:

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 1-ին կիսամյակի բակալավրիատի 1- 4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Ինչպես արդեն հայտարարվել էր նախորդ նիստին /03.09.20, արձ. 1/ դասախոսները էլեկտրոնային տարբերակով ամբիոն էին ներկայացրել 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակու իրենց բեռնվածքում եղած դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները սահմանված ձևաչափերով: Ընդհանուր քննարկման արդյունքում`

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումները և առարկայական նկարագրերը:

Ուսանողներին տրամադրվող ուսումնական նյութերի մասով նշվեց` դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես է ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով: Ինչպես նաև ամբիոնի որոշման համաձայն կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացում տեղադրվելու է առնվազն 1 գնահատվող առաջադրանք:

Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաներին: Դասախոսներին հանձնարարվեց 2 շաբաթյա ժամկետում ամբիոնի կողմից կազմված ձևաչափով ամբիոն ներկայացնել թեմաները, ըստ բեռնվածքի նշված ուսանողների թվով, հնարավորության դեպքում նաև 1 թեմա ավել:

Ամբիոնի հաջորդ նիստին նախատեսվում է թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատումը:

Նիստի նախագահ  Է. Գուկասյան

Նիստի քարտուղար  Ս. Միխրայան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ NՅ3

2020թ սեպտեմբերի 29-ին ժամը 12³⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա NՅ3 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատման մասին,
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Օրակարգում ընդգրկված էր 1 հարց` բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի թեզերի թեմաների հաստատում: Ինչպես հայտարարվել էր ամբիոնի նախորդ նիստին /10.09.20, արձ.2/ ըստ սահմանված ձևաչափի պետք է ամբիոն ներկայացվեին մագիստրատուրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները: Է. Կոկանյանը նշեց, որ առկա ֆիզիկա 4-րդ ավարտական կուրսում ունենք 7 ուսանող , մագիստրատուրայում` 7 ֆիզիկա, իսկ հեռակա բաժնում 3 ուսանող բնագիտություն մասնագիտությունից, 6 ուսանող ֆիզիկա մասնագիտությունից: Թեմաները ըստ ամբիոնի պահանջած ձևաչափի ներկայացվել են: Ներկայացված թեմաներից բոլորն էլ ունեն մեթոդական բաղադրիչ: Նշվեց, որ ի տարբերություն առկա մագիստրատուրայի հեռակա մագիստրատուրան տևելու է 5 կիսամյակ/2.5 տարի/: Ընդհանուր քննարկումից հետո`

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել հեռակա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:

Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ դասերի իրականացմանը և ամբիոնի կողմից իրականացվող դասալսումներին: Նշվեց, որ կազմվել է դասալսման գրաֆիկ, ըստ որի պետք է իրականացնել դասալսումները: Եվ ավելի ընդունելի կլինեն, որ դասալսումների թերթիկներում պարտադիր նշվեն առաջարկություններ, ինչը հնարավորություն կտա քննարկել և բարելավվել դասապրոցեսը:

Է. Կոկանյանը նշեց, որ հոկտեմբերի վերջին շաբաթում նախատեսվում է 1-ին միջանկյալ ստուգումների անցկացումը՝ ըստ ուսումնական պլանների, ուստի պետք է նախապես պատրաստել և ուղարկել գրավոր ստուգումների տարբերակները՝ հաստատման համար:

Նիստի նախագահ՝

Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝

Սիսիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°4

2020թ դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N°4 հարցումով առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Ամբիոնի 2020 թվականի հաշվետվության հաստատում,
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Օրակարգում ընդգրկված էր 1 հարց` ամբիոնի 2020 թվականի հաշվետվության ներկայացումը և հաստատումը: Է. Կոկանյանը ներկայացրեց ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունը`

1. Ամբիոնի ուսումնական գործունեություն

Հաշվետու ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնական աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով: Ուսուցման և ուսումնառության բոլոր աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են համալսարանի կանոնադրության, գիտխորհրդի, ֆակուլտետի խորհրդի, դեկանատի և ամբիոնի ընդունած որոշումների հիման վրա: Քննարկվել, վերամշակվել և վերահաստատվել են բոլոր առարկաների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Վերամշակվել և վերահաստատվել են ըստ ուսումնական պլանի կատարվող լաբորատոր աշխատանքների բացատրականները:

Ուսումնառության արդյունքները համապատասխանում են առարկայական նկարագրերով սահմանված վերջնարդյունքներին:

Ուսումնառության արդյունքների գնահատումը իրականացվել է ուսումնական պլաններում նշված ստուգման ձևերով և առարկայական նկարագրերով սահմանված գնահատման բաղադրիչների հիման վրա ԲՈՒՀ-ում ընդունված ընդհանուր գնահատման համակարգով: Գնահատումը իրականացնելիս հաշվի են առնվել առարկաների առանձնահատկությունները, լաբորատոր և գործնական դասերը: Գնահատման բաղադրիչների մաս է կազմում նաև classroom էլեկտրոնային հարթակում գնահատվող առաջադրանքները:

Ըստ ուսումնական պլանի կազմակերպվել և անցկացվել բոլոր դասընթացները, ինչպես նաև մանկավարժական և ուսումնական պրակտիկաները: Բոլոր տիպի պրակտիկաներից առաջ կազմակերպվել են կոնֆերանսներ: Ավարտին ուսանողները ներկայացրել են հաշվետվություն և կազմակերպվել են ամփոփիչ կոնֆերանսներ և պրակտիկայի պաշտպանություն ըստ համալսարանի պրակտիկայի վարչության ներկայացրած ձևաչափի: Ամբիոնում առկա են բոլոր պրակտիկաների թղթապանակները:

Ամբիոնում կազմակերպվել և անցկացվել են գիտական սեմինարներ, որոնք վարել են ամբիոնի դասախոսներ:

Ամբիոնում սեմինար են անցկացել`

- Ա. Եգանյան -«Գրաֆենի կառուցվածքը և ֆիզիկական հատկությունները »
- Կ. Ահարոնյան- "Coulomb interaction properties in two-dimensional structures based on the high-k dielectric substrates,,
- Ա. Եգանյան - „Estimation of the thermal expansion coefficient of graphene in the temperature range of 100-700K”
- Ա. Եգանյան - «Գրաֆենի ջերմահաղորդականության գործակցի գնահատումը լայն ջերմաստիճանային տիրույթում և այդ գործակցի կապը ջերմային ընդարձակման գործակցի հետ»:
- ❖ **Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 8 հոդված, որից 7-ը բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարանում:**
- ❖ **Ամբիոնի դասախոս Ա. Դանիելյանը որպես փորձագետ մասնակցում է ֆիզիկա առարկայի առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներին: Ծրագիրը ավարտվել է 2020 թվականի հունիս 30-ին :**

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնը ունի թվով 8 տպագրություն, որից 6 բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարաններում:

Հաշվետու տարվա ընթացքում`

Արտաքին կապեր և միջազգային գործունեություն

Ամբիոնը համագործակցում է`

1. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի,
2. Ֆրանսիայի Լորենի համալսարանի Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական համակարգերի լաբորատորիայի (LMOPS),
3. Իտալիայի Պադովայի համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի,
4. Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Անտոնիոյի և Բոզեմանի համալսարանների ֆիզիկայի ֆակուլտետների հետ:

Մասնագիտական կողմնորոշման և մարքեթինգային գործունեություն

Հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ կապերի ձևավորման նպատակով ամբիոնում ամեն տարի կազմվում է դպրոցների այցելության ժամանակացույց և ըստ ժամանակացույցի ամբիոնի աշխատակիցները այցելում են և՛ մարզային, և՛ քաղաքային դպրոցներ:

Որակի ապահովում

Ամբիոնի գործունեությունը մեծապես ուղղված է ուսուցման որակի բարձրացմանը: Որակի ապահովմանն ուղղված աշխատանքներից են՝

- SS տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում
- հազեցած լաբորատորիաների առկայությունը
- classroom էլեկտրոնային հարթակը
- ամբիոնում կազմակերպվող և իրականացվող սեմինարները
- փոխադարձ դասալսումները

Բաց քվեարկության արդյունքում՝

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել ամբիոնի 2020 թվականի հաշվետվությունը

Նիստի նախագահ  Լ. Գոշեյան

Նիստի քարտուղար  Ս. Գոշեյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°5

2021թ փետրվարի 8-ին ժամը 12⁰⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N°5 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
2. ընթացիկ հարցեր

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 2-րդ կիսամյակի բակալավրիատի 1- 4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Ըստ կարգի յուրաքանչյուր կիսամյակի սկզբում պետք է հաստատվեն դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ինչպես առաջին կիսամյակում որոշվել էր ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես էլ ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով: Ինչպես նաև ամբիոնի որոշման համաձայն կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացում տեղադրվելու է առնվազն 1 գնահատվող առաջադրանք:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների առարկայական նկարագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների հարցաշարերը:

Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքին: Հանձնարարվեց 2 շաբաթյա ժամկետում ներկայացնել հաշվետվությունների ուսանողների կատարած աշխատանքերի մասին: Հաջորդ նիստով նախատեսել մագիստրոսների ատեստավորումը:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Սիհիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°6

2021թ փետրվարի 22-ին ժամը 12²⁰ տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N°6 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2021-2022 ուստարվա ընդունելության մասին,
2. Google classroom հարթակում տարվող աշխատանքների մասին,
3. 1-ին և 2-րդ կուրսի մագիստրոսների ատեստավորման մասին:
- 4.

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը վերաբերում էր 2021-2022 ուստարվա ընդունելությանը: Է. Կոկանյանը նշեց, որ հաշվի առնելով հարցի կարևորությունը մշտապես անդրադարձել են ամբիոնի նիստերի և տարվել են աշխատանքներ այդ ոողդությամբ: Դեռ կիսամյակի սկզբում կազմակերպվում և անցկացվում են այցելություններ դպրոցներ, իհարկե մեծամասամբ շեշտը դնելով մարզային դպրոցների վրա, հաշվի առնելով մասնագետների դեֆիցիտը հատկապես մարզերում: Ցանկալի է, որ դասախոսները հենց դասախոսությունների ժամանակ ևս ներկայացնեն ֆիզիկայի կարևորությունը: Պետք է ուսանողներին տեղեկացնել 2-րդ մասնագիտության հնարավորության մասին, դա հնարավորություն կտա պահպանել մասնագիտությունը նաև ստանալ 2-րդ մասնագիտություն:

Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom հարթակում տարվող աշխատանքները մշտապես վերահսկվում են ամբիոնի կողմից, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը ամեն ամիս մշտադիտարկում է անցկացնում հարթակում և պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում Կրթության էլեկտրոնային կառավարման /ԿԷԿ/ բաժին: Այնուհանդերձ որոշ դասընթացներում առկա են թերություններ, հորդորեց առկա թերությունները շտկել կարճ ժամանակահատվածում:

Մյուս հարցով անդրադարձան մագիստրոսների ատեստավորմանը: Ինչպես նշվել էր ամբիոնի նախորդ նիստին պետք է ներկայացվեին հաշվետվություններ թեզերի կատարման ընթացքի մասին: Հիմք ընդունելով ներկայացված հաշվետվությունները`

ՈՐՈՇԵՑԻՆ ատեստավորել առկա մագիստրատուրա 1-ին, 2-րդ և հեռակա մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսներին:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ս. Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°7

2021թ ապրիլի 26-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
2020- 2021 ուստարվա N°7 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

- 1.Ավարտական ամփոփիչ քննությունների առցանց կազմակերպման մասին
- 2.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների առցանց կազմակերպման մասին
3. 1-ին և 2-րդ կուրսի մագիստրոսների ատեստավորման մասին

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի առաջին հարցը վերաբերում էր ավարտական ամփոփիչ քննությունների առցանց կազմակերպմանը: Է. Կոկանյանը նշեց, որ ելնելով երկրում տիրող համաճարակային իրավիճակից, ուսումնական գործընթացը շարունակում է կազմակերպվել և իրականացվել է առցանց: ԲՈՒՀ-ի որոշմամբ կիսամյակային քննությունները ևս կազմակերպվելու են առցանց: Քննությունների առցանց կազմակերպման և անցկացման մասին Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին կազմել և ուղարկել է ուղեցույցներ ինչպես նաև տեսահոլովակներ, որոնք արդեն ուղարկվել են դասախոսներին: Քննության ամբողջ ընթացքը պետք է տեսաձայնագրվի, google meet հավելվածը ունի նաև այդ գործառույթը:

Երկրորդ հարցը վերաբերում էր ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների առցանց կազմակերպման մասին: Է. Կոկանյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի /մայիսի 14/, առկա բակալավրիատի /մայիսի 13/ ինչպես նաև հեռակա /մայիսի 27/ ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների համար ստեղծվել է առանձին դասընթացներ:

Համաձայն ԲՈՒՀ-ի որոշման 2020-2021 ուստարում բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ որակավորման քննությունները ևս կազմակերպվելու և անցկացվելու են առձեռն: Հանձնաժողովի անդամների համար ստեղծվել են առանձին aspu էլեկտրոնային հասցեներ, պատրաստվել է առանձին տեսահոլովակ ուղեցույցներ քննությունների կազմակերպման և անցկացման մասին: Է. Կոկանյանը նշեց, որ ամբիոնը իր հերթին ևս կնախաձեռնի մի քանի

առցանց հանդիպում հանձնաժողովի անդամների հետ քննության կազմակերպչական հարցերի վերաբերյալ:

Երրորդ հարցով Է.Կոկանյանը անդրադարձավ 1-ին և 2-րդ կուրսի մագիստրոսների ատեստավորմանը: Ուսանողների ներկայացրած հաշվետվությունների, ինչպես նաև դեկավարների առաջարկությամբ որոշեցին ատեստավորել 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսներին:

Որոշեցին 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ամփոփիչ քննությունները կազմակերպել առցանց:

Որոշեցին 2020-2021 ուստարում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կազմակերպել առցանց:

Որոշեցին ատեստավորել առկա և հեռակա համակարգի 1-ին կուրսի մագիստրոսներին:

Որոշեցին ատեստավորել առկա համակարգի 2-րդ կուրսի մագիստրոսներին:

Նիստի նախագահ  Է.Կոկանյան

Նիստի քարտուղար  Ս.Միխրայան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°8

2021թ ապրիլի 29 և 30-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N°8 *անցանց* նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1.Առկա մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 10 ուսանողների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին իրենց մագիստրոսական թեզերը և տեսաներկայացումները: Ուսանողների ելույթների և գիտական ղեկավանների ներկայացրած կարծիքների հիման վրա`

1.Որոշեցին աստեսավորել 2020-2021 ուստարվա մագիստրատուրա 2-րդ կուրսի թվով 10 ուսանողներին և մագիստրոսական թեզերը երաշխավորել պաշտպանության`

- | | | |
|---------------------------------|------------------|----------------|
| 1. Աղախանյան Աշոտ Հագարապետի | Գիտական ղեկավար` | Եգանյան Ա. |
| 2. Ամրոյան Ալինա Խաժակի | Գիտական ղեկավար` | Բաբաջանյան Ն. |
| 3. Բաբայան Լիանա Վալերիկի | Գիտական ղեկավար` | Եգանյան Ա. |
| 4. Բաղդասարյան Հարություն Լևոնի | Գիտական ղեկավար` | Իշխանյան Ա. |
| 5. Գևորգյան Սյուզաննա Կարապետի | Գիտական ղեկավար` | Բաբաջանյան Ն. |
| 6. Գևորգյան Օվսաննա Սեյրանի | Գիտական ղեկավար` | Ահարոնյան Կ. |
| 7. Հովսեփյան Մարի Հուսիկի | Գիտական ղեկավար` | Դեմիրխանյան Գ. |
| 8. Ղազարյան Աստղիկ Մարտիրոսի | Գիտական ղեկավար` | Իշխանյան Ա. |
| 9. Մուրադյան Նելլի Եփրեմի | Գիտական ղեկավար` | Եգանյան Ա. |
| 10. Զիլինգարյան Աստղիկ Հակոբի | Գիտական ղեկավար` | Կոկանյան Է. |

Է. Կոկանյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի պաշտպանության օրը նշանակված է մայիսի 25-ին: Է. Կոկանյանը հավելեց, որ այս ուսումնական տարում ևս ամփոփիչ որակավորման քննությունները կազմակերպվելու են առցանց:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Միհիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N⁰⁹

2021թ մայիսի 3-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
2020- 2021 ուստարվա N⁰⁹ առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Առկա ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Առկա բակալավրիատի ավարտական կուրսի թվով 7 ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին իրենց ավարտական աշխատանքները և տեսաներկայացումները: Ուսանողների ելույթների հիման վրա`

Որոշեցին ատեստավորել 2020-2021 ուստարվա բակալավրիատի ավարտական կուրսի ներքոհիշյալ ուսանողներին և ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության`

- | | | |
|-----------------------|------------------|----------------|
| 1. Դանիելյան Հռիփսիմե | Գիտական ղեկավար` | Սաֆարյան Ն. |
| 2. Գալստյան Ստելա | Գիտական ղեկավար` | Եզանյան Ա. |
| 3. Մարգարյան Մերի | Գիտական ղեկավար` | Դեմիրխանյան Գ. |
| 4. Նազինյան Դավիթ | Գիտական ղեկավար` | Թարոյան Ա. |
| 5. Ոսկանյան Ֆրիդա | Գիտական ղեկավար` | Կոկանյան Է. |
| 6. Մազմանյան Աղասի | Գիտական ղեկավար` | Դանիելյան Ա. |
| 7. Մկրտչյան Վարդուհի | Գիտական ղեկավար` | Բաբաջանյան Ն. |

Է. Կոկանյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության օրը նշանակված է մայիսի 18-ին: Է. Կոկանյանը հավելեց, որ այս ուսումնական տարում ևս ամփոփիչ որակավորման քննությունները կազմակերպվելու են առցանց:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Մ. Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°10

2021թ մայիսի 27-ին տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2020- 2021 ուստարվա N°10 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Նիստին մասնակցում էին ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:

Հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի թվով 11 ուսանողների /5 բնագետ և 6 ֆիզիկ/ ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծված դասընթացում ուսանողները տեղադրել էին իրենց ավարտական աշխատանքները և տեսաներկայացումները: Ուսանողների ելույթների ինչպես նաև գիտական ղեկավարների ներկայացրած կարծիքների հիման վրա`

1.Որոշեցին ատեստավորել 2020-2021 ուստարվա հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ֆիզիկա մասնագիտության 6 և բնագիտություն մասնագիտության 5-րդ կուրսի թվով 11 ուսանողներին և ավարտական աշխատանքները երաշխավորել պաշտպանության:

Բնագետ`

- | | |
|-------------------------------|---------------------------|
| 1. Աբրահամյան Արշավիր Արայիկի | Գիտ. ղեկ.՝ Պետրոսյան Պ. |
| 2. Արոյան Շուշանիկ Ավետիսի | Գիտ. ղեկ.՝ Դանիելյան Ա. |
| 3. Գրիգորյան Նարեկ Ասատուրի | Գիտ. ղեկ.՝ Պետրոսյան Պ. |
| 4. Կարապետյան Մարիամ Արմենի | Գիտ. ղեկ.՝ Պետրոսյան Պ. |
| 5. Ջնդոյան Թամարա Արթուրի | Գիտ. ղեկ.՝ Դեմիրխանյան Գ. |

Ֆիզիկա

- | | |
|--------------------------------|-------------------------|
| 1. Աղաջանյան Մարիամ Աբրահամի | Գիտ. ղեկ.՝ Սաֆարյան Ն. |
| 2. Աղաջանյան Տիգրան Աբրահամի | Գիտ. ղեկ.՝ Թարոյան Ա. |
| 3. Կարապետյան Վահե Արշավիրի | Գիտ. ղեկ.՝ Ներսիսյան Ս. |
| 4. Հարությունյան Նարեկ Վազգենի | Գիտ. ղեկ.՝ Թարոյան Ա. |

Է. Կոկանյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության օրը նշանակված է հունիսի 11-ին: Է. Կոկանյանը հավելեց, որ այս ուսումնական տարում ևս ամփոփիչ որակավորման քննությունները կազմակերպվելու են առցանց:

Նիստի նախագահ

Է. Կոկանյան

Նիստի քարտուղար

Ն. Մխիթարյան